

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Բաղաժական, Գիտական

51^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 25


Գ. ՇՐՋԱՆ

22 ՅՈՒՆԻՍ 1902

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մասիս շաբաթաթերթի տարեկան բաժանորդագիրներն է Կ. Պոլսոյ համար Բառաւոն զր. և զաւանդներուն համար Յիսուսի զր., կանխիկ վճարելի: Արտատպութեան 12 ֆրանկ կամ 5 ռուպլի: Թղթատարական ծախքը խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն շնորհուով: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկէն: Մասիս հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ սոսու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պիտի տեսնեն ինքնուրոյն խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ աշխատեալ առարկութիւնները միատարրութեան չեն առնուիր:

Ձեռքով տրամադրած ձեռագիրները չեն ընդունուիր:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՏԵՐԻ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده آغوب ماطيوسيان مطبعه سنده « ماسيس » غزنه سى اداره سنه

ԽՄԱՍԻՍԻ ԳՐՈՒԹԻՒՆ « ՄԱՍԻՍ » Ի

Տպարան Յ. Մատթէոսեան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Rédaction de la Revue MASSIS

Imprimerie H. Matteosian

CONSTANTINOPLE

ՊՐՈՒՍԱՅԻ ԽԱՎՈՒՆԵՐԸ

ԳՈՐԾԱԾԵՑԵՐ

ՊՐՈՒՍԱՅԻ ԽԱՎՈՒՆԵՐԸ եւրոպական
 ներքին աւելի ԴԻՄՍՑԿՈՒՆ ըլլալուն տա-
 րակոյս չկայ, հետեւապէս աւելի ԱԺԱՆ
 են :

Ս. ՄԱՐՏԻԿԵԱՆ ԵՒ ՈՐԴԻՈՅ

ՊՐՈՒՍԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒ

ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

լաւագոյնը ըլլալու համարը կը վայելեն 35
 տարիէ ի վեր :

Դիմել՝

206-29, Եկնի Զարեք, Մանմուս Փաւս, Կ.Պոլիս

ՅԱՆՔԷԶԻ ՇՈՎԱՆՈՑՆԵՐՈՒ պատշաճ

Տուրեալ մասնագէտ Պ. ՊԵՅԼԵՐԵԱՆ (Բեռ-
 Թէքէ, Պէյքերի մողաղային դէմ, Բ. 56)
 պատիւ ունի ծանուցանել թէ իր վաճառ-
 տան մէջ կը ծախուին վերջին նորաձեւութեան
 համաձայն ընտիր հովանոցներ, մասնաւոր-
 պէս կանանց համար, որոնցմէ ամէնէն փա-
 կաճաշակներն իսկ գոհ պիտի մնան : Թան-
 նարարութեամբ կը պատրաստէ՝ թիւով ֆա-
 թէզի հովանոցներ, յարեւմտեան եւրոպական
 ներուէ : Պատրաստ կը գտնուին նաեւ նոր
 սանեկան օժիտի յատուկ գեղեցիկ հովանոց-
 ներ : Կը հրաւիրենք հայ ընտանիքները ան-
 գամ մը այցելել այս վաճառատունը որ ի-
 տեւակին մէջ առաջին է : Զափաւոր գիներ
 4-8

ԻԻՆԻՕՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊՍՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ շէնսք	240,000,000 ֆր.
1899ին գանձուած ապահովագին	19,500,000 »
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ գրամագլուխ	18,000,000,000 »

ԿԵՆԱՅ ՃԻՒՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ շէնսք	99,000,000 ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնը	253,000,000 »
Դրամագլուխ եւ պահեստը	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ
 «Իւնիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ
 ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼԻՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
 ՔՈՂ :

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց գեղջեալ գիներով : Նպատաւոր պա-
 մաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան
 պայմանները : Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիօն
 ապահովագրողը ԶԵՐՇ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'են-
 թարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաւոյման (accumulation des
 bénéfices) ՅՈՒՒ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրուեալ գործող ընկերութեանց կ'ապահով-
 գրուին :

Ընկերութեան գրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԳԱՆ
 Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալարա, Թանապուրուն խան, Օսմ. Պանֆային դիմացը
 Գործակալութիւնը Գործքի գլխաւոր քաղաքաց մէջ

ՄԱՆԻՍ

51րդ ՏԱՐԻ

— 22 ՅՈՒՆԻՍ 1902 —

ԹԻԻ 24

Ի ՈՎ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հասարակական գործը (Խմբագրական) Տ. Ա. : — Հագագարող. ԳԵՂԱՄ. : — Ծաբբուան կեան. ՈՒՆ. Յանկերգ-ցար. ՄԻԷԼԼԱ. : — Սիրասմաղ (Ոտանաւոր) Վ. : — Օսմ. գրականութիւն. Արձակ բա. Խառնոյթութիւններ. ՅԱՍՄԻԼ. : — Գիտական աշխարհիւն. Ուժի անսպառ. ակը. Վ. Ա. Գ. : — Ընթանե. կան ճառման. Վճարօրը. ԲՕԼ. ՊՈՒԲԺԷ. : — «Խօսելալարծութիւն». — Յուսանար :

ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Պ. Արէլ Ապրէսեանց, Արեւելիի Կովկաս. նան թղթակիցը, — որուն գրութեանը պարզ լրատուութեան մը սահմաններն անցնելով՝ յօդուածներ կամ տեսութիւններ են որուն այժմէութիւնն ունեցող ընկերային, ընտանեկան, դրական եւ ուրիշ այս կարգի նորոգում վրայ, — իր վերջին մէկ նամակին մէջ կը յայտարարէ թէ հայերէն զիրքերու հրատարակութիւնը նիւթապէս անհաւարելի մեղմանքի մը կը դառնայ, իրենց՝ Կովկասեան Հայ. թիւն մէջ՝ որուն գլխաւոր պատճառը կը հա. մարի գլխերուն սղութիւնը : Եւ օրինակ կը կը բերէ ուսանելու հրատարակութեանց տա. րապայման աժանութիւնը. Բուշկինի հեղի. նակութեանց ամբողջ ժողովածուն կարելի է ունենալ, կը գրէ, 1 բուպլիով. Տաստաէվսքի 24 հատարները՝ 7 բուպլիով. Դուրեկէնէվի բոլոր հեղինակութիւնները՝ 5 բուպլիով : Մինչդեռ, առանց հայերէն թարգմանութիւն. ները, եռադասիկ կամ աւելի գին պիտի ու. նենային : Ուշագրաւը հոն է որ, հայ հրա. տարակիցները բարձր գիներ դնելով հանդերձ իրենց տպագրած զիրքերուն, դարձեալ շահ. լին ունենար : Նամակագիրը ինքն իր անձին փորձով զիտէ աւելի, — երեք հատոր հրա. տարակած ըլլալով եւ երեքն ալ մնասով :

Պ. Ապրէսեանց՝ որքան դրական կարողու. թեան այնչափ ալ գործնական միաքի տէր

մարդ է, եւ իրողութիւն մը հաստատած ա. տեն՝ անոր ցաւալի հանգամանքը վեր առ. նելով չի շատանար եւ անոր բացառանշու. թիւները չարձակեր : Դարմանը գտնել ու յոյց տալ կը ջանայ :

Որովհետեւ այս «Հրատարակչական» խըն. դիրը Պոլսահայ մամուլն ալ չա՛տ ու չառ զբաղեցուցած է, եւ մեր հեղինակներուն ու թարգմանիչներուն մտածման մշտաւեւ ա. ռարկան դարձած, կ'արժէ քիչ մը զբաղել Կով. կասեան փորձ գրչի մը կարծիքով՝ այս մասին :

Պ. Ապրէսեանց, տեսնուած յուսահատա. կան արդիւնքներուն հակառակ, յոռեաւեւ չէ. ընաւ. եւ համոզուած կերպով կը յայտա. րարէ թէ «հրատարակութիւնները մեղմում ոչ միայն մնաս չեն բերի, այլեւ կարող են օգտակար լինել, եթէ դրին որոշ հիմքերի վրայ» : Այդ հիմքերը պէտք է կազմեն՝ մեծ. կակ զրամագլուխ եւ լաւ կազմակերպու. թիւն՝ հրատարակչական գործին համար : Ռուսաստանի մէջ վերջերս մեծեր է ծանօթ հրատարակիչ (éditeur) մը, Պավլենկով, քա. նի մը միլիոն բուպլի թողով իր ժառան. գորդներուն, — միլիոններ զորս շահած էր աժան զիրքերու հրատարակութեամբ, լիա. ռաւ վարձատրելէ ետքը հեղինակները ու թարգմանիչները : Իր յաջողութեան գաղա. նիքը կը կայանար՝ առջի օրէն զրամագլուխով

գործի ձեռնարկած ըլլալուն եւ որոշ ուղե-
գիծ մը ունենելուն մէջ :

Հայ մը , գրականութեան ու բանասիրու-
թեան սիրող , շատ շատ կտակ մը պիտի ընէր
օգտակար գիրքերու տպագրութիւնը դիւրա-
ցնելու համար , ան ալ հազուադէպ կերպով
ասկէ դուրս որ եւ է անհատական ձեռնոտու-
թիւնն պէտք չէ սպասել մերիններէն , մտա-
ւորական կեանքի՝ գրականութեան վերաբե-
րող այս տեսակ ձեռնարկութեան մը մէջ : Մեր
ժամանակակից հարուստները երբեք չպիտի
ուզեն մեկնիտոս հանդիսանալ , նոյն իսկ իրենց
սիրած մէկ հեղինակին , իրենց հաւնած մէկ
երկասիրութեան համար . իսկ անոնք որ ան-
կեղծապէս ունին գրասիրական տրամադրու-
թիւններ , անոնք ալ սահմանափակ կարողու-
թեան աէր են ընդհանրապէս : Կովկասի
Հայերուն մէջ աւելի՝ առատածեռութիւն
կայ այս տեսակէտով , եւ սակայն՝ այդ նը-
պաստաւոր երեւոյթին հակառակ՝ Պ. Ապրէս-
եանց կը հակառակի հրատարակչական գործը
տեսակ մը բարեգործութիւն նկատելու գա-
ղափարին , եւ կ'առաջարկէ որ առեւտրական
ձեռնարկութիւն մը դառնայ անիկա , հրա-
տարակչական մարմինը վերածուելով «վաճա-
ռականական հիմքերի վրայ գրուած ընկե-
րութեան» :

Արգիւնքը :

Այն գումարը զոր անհատ մը չպիտի կրնար
կամ չպիտի ուզէր տրամադրել , հաւաքարար
գիւրին պիտի ըլլայ ճարել , աֆցիօնէրական
ընկերութեան մը կազմութեամբ , — օրինակի
համար՝ իւրաքանչիւր բաժինը 50ական բուս-
լիէն 10,000 բաժինի վրայ , 50,000 բուսլի
գրամագլուխով :

Եւ Պ. Ապրէսեանց կը պարզէ՝ այս կերպով
սկսուած հրատարակչական գործի մը գեղե-
ցիկ հեռավարակերը , որ գէթ թուղթի վրայ
ու իր գրուած ձեւին մէջ , այնքան հրապու-
րիչ է գրչի վաստակաւորներուն համար , կա-
տարելագործեալ ապարան , առատ վարձա-
րութիւն հեղինակներուն ու թարգմանիչնե-
րուն , մաքուր՝ բայց աժան տպագրութիւն ,
եւ ամէն խաւերու մէջ այդ գիւրամատչելի
զինով հատորները ծաւալելու միջոցներ , —
հատորներ որոնք , հարկ կ'ա՞յ ըսելու , ծա-

ռայեն ժողովուրդին մտաւորական զարգա-
մանը , ըլլա՞ն գիտական կամ գրական :

Արեւելիի Կովկասեան թղթակիցը որքա՞ն
ալ , իր այս ծրագրին մէջ , մերմել ուզէ բո-
րեգործութեան ու մեկնաստի սկզբունքը , եւ
այս տեսակ ձեռնարկութիւն մը հաւատար-
միկտեղ ուզէ , — եթէ ո՛չ աւելի հաստե-
տուն , — նաւթային շահագործութիւններուն ,
մեղի համար որ՝ հեռուէն՝ միշտ շլացող եղա-
նք նաւթահորերուն արտադրած միլիոններու
պատմութիւնն ու տեսակ մը սկզպակիչ
գործած՝ գրչիւղ դրամ շահելու իտէպի մասի
խթօթիի պէս բան մը կերեւայ հաւատար-
մէ մեր համայնքին մէջ կրնան գտնուիլ հա-
րուր հոգի որոնք 10ական սակի արածադրե-
հրատարակչական ձեռնարկութեան մը , նոյն
իսկ շահ ընելու ակնկալութեամբ :

Ամէն պարագայի մէջ , համակրելով Պ.
Ապրէսեանցի պարզած առողջ տեսութեանը ,
Մասիսի մէջ զայն շնչտելու կը մղուինք մի-
րաբերուն ու մտքերուն ընտելացնելու շար-
ձանքով , եւ փափագելի էր որ Պոստայ տ-
րիչ թերթեր ալ զբաղէին այս հարցով : Այն-
գաղափար մը , ծայրայեղօրէն լաւատես , որք-
օգտուելուն միջոցը՝ ծայրայեղ յոռետեսու-
թեամբ վերաբերուիլը չի կրնար ըլլալ : Բն-
րեւս Արեւելիի ընթերցողներուն մէջ գտնուե-
ցան հարուստներ որոնք , պահ մը վար քնե-
լով լրագիրը , լրջօրէն մտածեցին , ինչպէս պիտի
մտածէին երբ մէկը ներկայանար ու առա-
ջարկէր իրենց ճարտարարուեստական կամ
առեւտրական ձեռնարկութիւն մը : Մեր գրա-
դէաները , բանասէրները , թարգմանիչները
մեկնաստիներ փնտռեցին մեր հարուստներուն
մէջ ու չի գտան . եթէ իրենց մտաւոր ա-
խատութիւնը արժեցնելու համար չափա-
ներ փնտռելու ելլան , — Պ. Ապրէսեանցի
ծրագրին համմատ , — նորէն յուսաւոր
պիտի ըլլան :

Մեր տպարաններէն , մեր գրատուններէն
մէկ քանին պզտիկ փորձեր սկսած են ընել
արդէն՝ հրատարակչութեան , եւ այդ փոր-
ձերը քաջալերական եղած են : Ինչո՞ւ այս
փորձերը անհատական սահմանի մէջ ու մե-
կուսացած մնան , եւ մանաւանդ ինչո՞ւ հազ-
ուադէպ , գրամագլուխի սակաւութեան պատ-

ձառով, մինչդեռ պիտի կրնային շահաբեր դառնալ՝ թէ՛ ձեռնարկուններուն, նիւթապէս, եւ թէ՛ հանրութեան, մտաւորապէս, լայն սահմանի մը մէջ գործադրուելով, ինչ որ պիտի ներքէր աժան գիններ դնել եւ աւելի ապառուռ ունենալ :

Երբ ամէն օր, բամպակի ու մանածի հրապարակը, ճէհրիի ու լուրիայի գինները իրենց յատուկ սիւնակները կուեննան մեր օրաթիւերթերուն մէջ, չե՞նք կրնար զրազան նայի հոգածութիւնը ցոյց տալ քիչ մըն ալ զրազան ձեռնարկութեանց մասին, զուտ «գործի մարդու» տեսակէտով : Պ. Ապրէս-նանցի թղթակցութիւնը շատ պատեհ առիթ մը կընծայէ մեր հրապարակագիրներուն եւ մեր այն «գործի մարդեր»ուն որոնք կը սիւնակ գրելով ալ զրազիլ, կարծիքներու հրապարակային փոխանակութիւն մը ընել մեր թերթերուն մէջ, փոյթ չէ որ թերթ ու դէմ ըլլան տեսութիւնները, ենթագործութիւնները, հաշիւները, միշտ օգուտ մը կրնայ առաջ գալ անոնցմէ :

Տ. Ա.

«ՈՍԵՆԼԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ»

Ուսումնական Խորհուրդը իր վերջին նիստերէն մէկուն մէջ բաւական զրազեր է լեզուաբանական հարցով մը օրուն յիշատակութիւնը չերեցցալ քակայն իր որոշումներով կարգին մէջ . թէեւ, անոնք, կը պարունակեն երեմին ժողովականներու երթեւեկին ու նիստակային վերաբերող անկարեւոր մանրամասնութիւններ անգամ : Ասով հանդերձ, բանասիրական աշխարհը չի զրկելու համար այդ շահեկան վիճաքանութեան արգիւնքէն, որ բազմիքի ապագայ հեղինակներու եւ աշխարհար քերականութեան ժամանակակից երկաթիւրդներու համար իր մեծ նշանակութիւնը ունի, յանձն կառնենք պղտիկ անգղանապահութիւն մը ընել եւ իրողութիւնը պատմել երկու տողով :

Մտակայ գաւառի մը ազգ. վարժարանին համար ֆրանսերէնի հմուտ ուսուցիչ մը գրառելու վրայ էր խնդիրը, եւ այս առթիւ լրագիրներուն արուելիք ծանուցումը կը

խմբագրուէր «յատենի ժողովոյ» . — Գիտէ՞ք թէ, պատկառելի Խորհուրդը իր մէջ գրաբարեան ու աշխարհաբարեան տարրեր պարունակելուն համար, լրագրական ծանուցումներու շարադրութիւնն իսկ խորհրդակցութեան եւ քուէի դնելու խղճմտութիւնը ունի ժամանակէ մը ի վեր — Եւ ահա՛ քարտուղարը կը թողու գրիչը, ու շուարած ձեւով մը կը հարցնէ .

— Տեա՛րք իմ, ի՞նչ բառ պիտի գործածենք ֆրանսերէն խօսելու վարժութեան, pratiqueի համապատասխանող . . . :

Ժողովականները, — ներեցէ՛ք, «խորհրդականները» պէտք էր ըսէի, քանի որ Ուսումն. Խորհուրդին անդամները իրենք իրենց այս փառքոսը տալ սկսած են ժամանակէ մը ի վեր, ինչպէս կերեւայ իրենց համադասութեանց մէջ, — պահ մը լուռ կը մնան՝ իրարու երես նայելով . յետոյ լեզուաբանական տեղգոտ վիճաքանութիւն մըն է կը սկսի՝ որուն մէջ՝ կը յիշուին Այտընեանի, Գարապաշեանի, Նորայրի անունները, եւ իրարու դէմ կը հանուին հին քերականութիւնները եւ «ընդ մամուլ» եղող նոր քերականութիւնները :

Վերջապէս, ժամանակը անցած ըլլալով, լեզուական վիճաքանութեան փակումը կը քուէարկուի եւ Խորհուրդը կ'որոշէ ընդունիլ այսուհետեւ խօսելալարժոքիւն կարճ ու կոկիկ բառը՝ իբրեւ համապատասխան արդի աշխարհաբարի կանոններուն :

Ժողովին ցրուելու պահուն, թէեւ անդամներէն մէկը կը փորձէ դիտել տալ, թէ ինչո՞ւ ուրեմն այնքան դատափետուեցաւ ու հեղուեցաւ սակէ առաջ «խորհրդակերպ» ու «զրկակերպ» բառերուն կերտողը, բայց իր ձայնը անլսելի կը մնայ ու դիտողութիւնը անհետեւանք :

Մանչեսթրի հոգեւոր հովիւ Զուդայեցի քահանան վերջնապէս դադրեցուցուեր է իր պաշտօնէն եւ անոր անդ առժամապէս նշանակուեր է Ռուսձուքի Մկրտիչ քահանայ կրճիկեան, յառաջիկային թողուելով յարմար եկեղեցականի մը վերջնականապէս ընտրութիւնը :

ՀԱԶԱՐԱԹՈՂ

Սիմ սարի զէպ հարաւ երկնցած լեռնա-
գաւառը կողմուած է բուսաւէտ թփուա եւ
անտառախիտ բոնձրիկ բոլոր սարերու ցան-
ցերով, որոնց չորս կողմերէն կը կանչկտան
լէն-կըր, երկէն-բարակ, օզիկ-օզիկ ու պու-
րակ-պուրակ պրակով բնուած հովիտներ ու
սրտաշէն ձորակներ, որոնց մէջ՝ արեւը
կը մատղաշնայ. կեանքն ասունին ու բու-
սականին կը թփախ, կը փիթթի եւ օդն՝ ան-
օտրայած՝ մաղուած ու սէրսրուած՝ անմա-
հական սիւքեր կը ցանցնէ։ Հոն կեանքը
պարզ է ու սակաւաւոյգէտ։

Էն բուրաստան հովիտներէն մէկին ջուխ-
թակ-խորտակի կողերու վրայ նստած կ'երևի
վաղեմի շէն մը՝ ընծ քարը՝ հիմա ի վերայ վիմի,
որուն քարէապան աները ծառաղարդ փո-
ղաններով ու աղբներով՝ բնական գեղանի
պարտէզ մը ձեւացուցած են քարավէժ ուղ-
ղութեան մը վրայ, որուն էն բոնձրիկ կա-
տարը կը հանգչի՝ յանուն Ս. Եղիայի կառույց-
ուած դարեւոր, կտրմիր-կամար մատուռը,
իր շուքին տակ պատասպարեւով գեղին ցիրու-
ցան աները։

Այս շէնին ալմայիներ (աներ) բաժան ու ան-
ջրպետուած են իրարմէ արագասան, արծթի
ձնջրիկ առուկով մը, որ ամպածրար սարի
մը սրահէն կը կլկլայ։

Տուներն ու անակները 40—50ի կը մօ-
տիկնան՝ խաշնարած ու մշակ ժողովրդին։
Անոնց մէջ մեծ տեղ մը կը բռնէր Աբօ Խչօ-
յենց բաղմանդամ գերդաստանը. օճախ նա-
հապետական, որ ձէնք ու ձունք, անուն-
անկուն ունէր լեռնագաւառին ամէն կողմը՝
անկոխ գոմերու, զօղաններու մէջ անդամ։
Օճախ հաղարաթող, օճախ առատաստիզան
հաց ու թանով, սէր ու սիրով, եղ ու մեղ-
րով, մեծատուն ընչեղ սերմնավար կալուած-
ներով, պողատու պուրակներով, այգիսառ-
նով, նախիր ու հօտերով այծեաց ու մաքեաց։

Աբօ Խչօն՝ որ ութսուն ապրին մարմնե-
րէ՝ ալեւորիկ մորուսով՝ ներկայացուցիչն էր
համրայ օճախին ու սիրունիկ գեղին։ Աբօն

գտառգիտունէ մը աւելի փորձառու, ալ-
խարհք-տես մարդ էր։ Մինակ սըր կար-
պեա չէ՝, երբեք հեղ Սուրբ Երուսաղէմը եւ
Քրիստոսի երկնային-երանական լոյսը տե-
սեր էր . . .

* * *

Սարերուն վրայ, ինչպէս գարունը անգամ
աշունն էլ վաղհաս է։ Նախըրթօղի պար-
նոր էր յարեւմտեր, Յիսնակաց կիրակին ա-
ւանդական աստիկ օր մըն էր։ Էն բանիկ
գեղերու մէջ, որ արդէն խեղդ աշունքը անց-
նելու վրայ էր։ Զիւները մաղած էին արդէ
իրենց մորմօրէ ալուրը կեփին եւ Անտօք ա-
րերու ճականուն։ Կիրակի առաւոյ ժամ-պա-
տարագ կար յընծ քար։ Ծերուկ Տէր Թորգ-
ժամը արձկնէ վերջ բոլոր ժամերներով աղ-
ղուեր էր Աբօ Խչօյենց մեծ-բակ դուռը, որ
աչապ զաւապ նախաճաշիկէ մը յետոյ դիմաւ
րեր էին գեղ-գեղով զէպ Աբօյենց գոմանը,
որ մէկ ժամ հետի կը գանուէին Արեւադար
զին՝ անվերի սարի մը ստորոտ, որուն վրե-
կը միմիայն խորուն-անհուն անտառ մը։

Հոն էին նաեւ Ընծ քարայ գրկից չինովե-
ներէն շատերը հըս ձերուկին ու ջոկին
արուսին (հարս) ու խորդին։ Աբօ Խչօն ամէ-
նէն աչքասուռ տեղը գուգուրած էր՝ ապրուս-
տեւ փուշիով փաթթուկ նախաշուն գտալը ու
լուխին՝ թեւանի չէկիկ ապան ուսերուն՝ աղ-
նանկար հուշիկները (չապկին թեւեր) չըլտած
վեր-բաղուններուն, նոր խարուկները օտք-
բուն գոյնդգոյն թաղիքի մը վրայ, նուէր
պրծնադարձ լպտաներուն։ Նա սովեցու վիթ-
խարի ընկուղենի մը՝ մէկ ձեռքը բռնած
քէհրիպարի երկար ու մետաքսապատ չիպ-
խը, եւ միւսին՝ իւրից սեւ համրիչը՝ դր ըն-
դունած էր Աթխայ Տ. Թաղէոս եպիսկոպո-
սէն։ Ընկուղենիի այս ու այն կողմը չարած
էր բազմութիւնը՝ տարեւորները նստած եւ
ճահիւները ստաց վրայ։

Մծուկ չեղաւ, միւսին ժամանակը չէր
Բոլորն էլ, ինչ որ բանի մը կը սպասէին
Ամէնքն էլ Գոմանուն կողմը կը պալլէին։ Զի-
պոխներ հազիւ դարձրուեր էին, ահա աւազ
հովիւ Մծոն ժրպիտուկ՝ ու չորս հողի իր ե-
տեւէն՝ զայգ, զայգ՝ ամէն մէկ զոյգին մէջ
զէն մէկ մէկ նորահաս-խմբու պարաններ (խոյ)

հասան ու յառաջացան Աբօ Խջօյի ու տէր-
տէրի տաշեւ։

Աւագ հովիւը՝ Մքօն՝ ձեռք մը մէկ պա-
րանի եղջուրին, միւսը՝ մէկալ պարանին՝ պո-
ռաց. — Խէր եղնի հաղարածողը—հաղար բա-
րով մըր ջաղամտովին . . . Անմիջապէս հովուին
հետեւորդները պառկեցուցին երկու պարան-
ները։ Ոտքի վրայ էին Տէր Թօրէն եւ
Աբօ Խջօն։ Առաջինը ազօթք մը մթմթթաց-
իակ Աբօն կանչեց. — Մատղեցէ՛ք կանաչ
խորան Սըբ Գորգայ . . . — Մատաղները
կարուկէ վերջ՝ բաղմուծիւնը օտքի ելած,
առաջնորդութեամբ տէրտէրին ու Աբօյին՝ դո-
մբու դռներու առջեւ եկան կեցան։ Տէր-
տէրը կարգաց նըղնդուն պահպանիչ մը,
դռները բացուեցան, ու աւագ մշակը դուրս
եկելով սկսեց թողուլ ոչխարները։ Ոչխա-
րածուար պիտի ըլլար։ Մքօն մէկիկ մէկ
ոչխարները յառաջ կը բերէր եւ Աբօ Խջօն
հաղարածովի հին ցուպը անոնց մէջքէն իջ-
նելով կամկար մը կը համբէր։ Տէրտէրն ու
համբները կը բռնէին համբարած (համբանքը)։
Հաղար մը համբուած էր. սկսեց երկրորդ
հաղարին համբանքը, զոր լրացուցին կէսօրը
նոր կտորած։

Հաղարածովի տօնն էր այս։

* * *

Հաղարածով, ինչ խորհրդաւոր անուն,
ինչ տօնիկ բառ լեռնակեցիկ շինականին։
Տօն լաղղի եւ ունեւորութեան, տօն օճախի-
չին նահապետական ժամանակները այս հան-
գեաները կը կատարուէին այն ամէն լիա-
նաս տարիներում, երբ որ գեղի ո՛ր եւ է
համբայի մը ոչխարներուն թիւը հազարի կը
հասնէր։ Հաղարն ալ խորհրդաւոր թիւ մըն
էր ռափկին համար։ Կ'ըսէին թէ՛ հաղար
ղլուլ ոչխար ունեցողի ճակտին վրայ Աստու-
ծայ մասը կար եւ ճակատագրի զաւաղանը։
Այն տեսակ տուներ կամ օճախներ երկոյս եր-
ջանիկ կը համարուէին։

Հաղարածովի բուն արարողութիւնը նոր
կը սկսէր։ Ոչխարահամարէն վերջ, Աբօ Խջօն
հրամայեց, որ հաղարաբողներ ջոկուին ու
տարուին։ Աւագ հովիւը, արդէն կանուխէն
ջոկած ու ընտրած էր իւրաքանչիւր հաղարին
համար մէկ ների, երկու հիւսր (անձին—նոր

այծ) — հետեւաբար 2 ների, 4 հիւսր բաղ-
մութեան ներկայացուեցան։ Գրեթէ բոլոր
այծերուն ամէնէն կայտառներ ու ընտիրներ
էին։ Բարակ, բայց ամուր շղթայից կախ-
ուած մէկ մէկ հմայիկներ անցուցին անոնց
պարանոցներէն, Տէրտէրը կարգաց օրհնէքը,
Աբօ Խջօն համբուրեց անոնց ճակատները եւ
տհա տասներկու խորդեր՝ բարակ լաթերով
կապեցին ների եւ հիւսրներու աչքները, —
«Աստուած չնորհաւոր ննէ, մէկն ի հաղար
գառնայ» աղաղակներու մէջ՝ շաղկեցին ու
թրաթափ անցան, գային։

Համաձայն տեղական վաղեմի աւանդու-
թեան, հաղարածով այդ ոչխարները աչքնին
կապուած վիճակի մէջ՝ կը տարուին Կեփին ըս-
ուած լեռան մօտերը՝ քարքարուտ բարձրա-
ւանդի մը վրայ դառնուած մութ անտառին
կեդրոնը, որ կ'արձակուին եւ ազատ կը
թողուին։ Հօն արդէն անպակաս են երամիւե-
րով վայրի այծն ու ոչխարը։ Այս այծերը, որ
ամէնէն ճարպիկներէն կ'առնուին, չատ հեղ
ընտելանալով անոնց հետ, կը յաջողին պաշա-
պանել ինքզինքնին, անվնաս անցունել ցրտա-
չունչ ձմեռը եւ անվտանգ վայրի անասուններէն՝
ողջունել դարունը։ Այն ատեն, որ այդ կողմը
բարձրանան իրենց պատկանած հօտին ոչխար-
ները, խայտալով կուգան կը խառնուին։

Ահա այդ բարեպաշտութեան ժուռն էր,
որ կը շեշտուէր օճախին անխախտ ու բեղ-
մնաւոր ճակատագիրը։ Այն ատեն հռչակ կ'ել-
նէր ամէն կողմ, ու շնորհով գովքեր բաղ-
դաւոր տանուաւրէն, որուն հետ Աստուած ու
սուրբեր է՛լ արուշ—բարուշ էին եւ ունեւորու-
թիւնը՝ որդւոց որդի ապահովագրուած էր։
Ե՛լ օճախը նուիրական էր։ Կըսէին թէ Աբօ
Խջօնեց պապերուն ժամանակն էլ, երբ հա-
ղարածովներ արձկեր են, անոնք դառնալով՝
գալնան միացեր են հօտին . . . Աբօն՝ նոյն
օրը՝ ի ներկայութեան այցելուներուն՝ վար-
ձատրեր էր իր աւագ հովիւը ջուլթակ հաղա-
րածովին համար, ու նուիրած էր ծնածներէն՝
հարիւր հատ մաքի եւ նոյնքան մըն էլ այծ։
Աւագ հովիւը կ'իսհամբայ եղեր էր։

* * *

Գառնուչորս տարի անցեր էր այդ օրերէն,
չատ հետու ժամանակներ չէր, ու Աբօ Խջօն

տակաւին ողջ՝ իր արեւը կ'ուտէր : Հարիւր չորս տարեկան էր : Թէպէտ աչւնները մաշած, ոտները գթաւ, դեռ ճոկանի վրայ կրնար առաւելաւ, Հնոք հովիւը Մքօն՝ անուանի համալայ մը դարձեր էր : Ծիւղէ նոյն նախընթացին, հեղ մէջ իջոյի սպիտակ մորուստը անհետ (նախագահութեան) հովիւին էլ հաղարածողը տօնը կը կատարուէր : Աքօ իջօն՝ իր բարեացակամութիւնը յարատեւ ընելու համար, Մքօյի աղջիկը իւր թոռնիկին վրայ՝ նոյն օրը պատկել տուեր էր : Հաղարածողը ու հարմարիքի տօները իրար խառնուած էին եւ բարեօրէն նահագնեւոր՝ հարիւր հինգ տարեկան՝ անթաց աչքերով առանց ցաւ ու զոռի՝ հանգիստ կ'ամփոփուէր իր լուսնոգի պապերուն քով :

ԳԵՂԱՄ

ՍՏԱՑԱՆՔ

ՄԻԽԱԵԼԵԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՊ (1701-1901). գրեց Յովնանէս Յ. Ալան, — պատկերազարդ փոքրիկ հատոր մը, Վենետիկի Մխիթարեան տպարանէն հրատարակուած :

Երեսուսարդ հեղինակը, որ Պօլսահայ մամուլին մեջ ծանօթ է իր գրուածքներովը, այս հատորին մեջ ամփոփած է՝ Մխիթարեանց յորելեանին առթիւ Բիւզանդիոնի մեջ իր հրատարակած յօդուածներուն շարքը որ շահեկան նօթեր կը պարունակէ Մխիթարեան գլխաւոր միտքերուն ու գրիչներուն վրայ : Գին 70 սանդիւմ :

ՇԱԲԹՈՒԱՆ ԿԵԱՆՔԷՆ

ՅԱՆԿԵՐԳ — ՅԱՆԸ

Ամէնէն առաջ հարցնեմ որ, կ'ախորժի՞ք վարժապետներէն, կամ անոնց վրայ խօսուէ՞լէն, — վարժապետը չչիթիւն ու պայմանով սակայն, ուսուցիչին հետ, — որովհետեւ երբեք չպիտի ուղէի որ չսիրած մէկ բաներնիդ մտիկ ընել տամ ձեզի :

Աս հարցումը կը մղուի մէկէն ի մէկ ընել, գիտնալով որ մարդիկ կան, որոնք կը խորշին լսելէ «վարժապետ» բառը, որչափ պիտի խրատչէին լսելէ . . . Եւսան խաբող կոտորաւորին անունը :

Բայց անոնց ինչ ըլլալը, կամ ուրիշնե-

րուն անոնց վրայ մտածածը իրենց ձեռքէն ու սկիւմի :

Աւանդական սովորութեան համաձայն, արտաբեր՝ ալ կաղմուեցաւ ուսուցչական ընտրութիւնը քննիչ յանձնաժողովը, գիտէ՞ք, — որովհետեւ ամէն տարի անպատճառ պէտք է վարժապետ ձեռնադրել, աւանդական վրէժնաւոր : — Այս յանձնաժողովը մէկ ուսուցչական պաշտօն մը ունի, մեր գաղափարականութեան գործին համար : Վկայական կը բաշխէ անիկա՝ զպրօքէն ելլող «ուսուցչական ընտրութիւններուն» (.), — ես վստահ եմ — ճիշդ այնպէս, ինչպէս հայրիկ մը թափնաւորին մէջէն հանելով խնձոր կը բամբէ, իր կունը, դրան տակը, իր գէմը չարուած իր երկվեցեակ մը տղոյ :

Ձեռք բեր թէ այս յանձնաժողովը քննութիւն չպիտի կատարէ ներկայացող տիրապետներուն կարողութեանը վրայ, բայց գէշ համադրումը ունի որ, ներկայացող այդ ընտրութիւններուն մէկ ո՞տքը անգամ դուրս չպիտի մնայ վկայականի արժանանալէ, եւ անոնք, իրենք ալ, զարմանքով պիտի տեսնեն թէ պատկուած են՝ իրենց անձանօթ արժանանալով — մասնագէտ ֆրանսերէնի (.) կամ թուրքերէնի թեան կամ գրականութեան, — հոգ չէ թի Սիմօն Գափամաճեանի Հաւաքածոյէն անոնք բան ճանչցած չըլլան գրականութեան, — օգնական ուսուցիչ հաշուադրութեան, պատմութեան եւ աշխարհագրութեան, եւ «արլովըն հանդերձ» :

Ասիկա ձրի առատաձեռնութիւն մըն է ինչ պիտի ընէք, տեսակ մը փութաշնորհութիւն, «ձեռք կարկառելու» զպրօքէն ելլող պարոններուն՝ գործի մը աէր ըլլալու, ասպարէզներէն մը ընդգրկելու, հոգ չէ՝, ասպարէզներուն ամէնէն ապերախութեամբ, ամէնէն փշուղջութեամբ :

Այս գթածութեան չնորհիւ է սակայն որ, այսօր մեր զարատեւները լեցուած են այդ մասնագէտներով, եւ «ուսման ու գիտութեան անունը կը ջամբեն, իւրովստեմ, հայ մանկաւոյն» . անանկ չէ՞ :

Կերեսայ թէ, — տեղեկութիւն անգամ չունինք, մեղք, — մեր զարատեւները ամէնքն ալ վարժապետանոց դարձած են, վերջին ժամանակներս, քանի որ լապտերով ալ

պիտի կրնանք գտնել ազգ. վարժարան մը աւարտող մէկը, որ միտքը դրած ըլլայ վարժապետէն տարբեր բան մը ըլլալ: Պէտք է հաւատարմ ասոր, առանց այլեւայլի:

Զարմանալի է, այդ ընթացաւարտներուն ամէնքն ալ, տոգորուած են հայ մանկապիտի կաթ ջրմէնէն բուռն փափաքներով, եւ կողքին որ երջանկութիւն մը համարուի իրենց մտնողը, քանի որ, կը կարծեն, իրենք կոչուած են նուիրական պաշտօնի մը ծառայելու, եւ եթէ իրենք չծնէին, հայ տղաքը պիտի գրկուէին այդ կաթը ծծելու մեծ բարբաղղութենէն:

Դէ՛ չէ՛, այս ընթացքով, վաղը, օր մըն ալ, պիտի տեսնենք որ, ուսանողէ աւելի վարժապետ բուսցուցած ենք: Այն ատեն, չէ՛ք կրնար գուշակել, պէտքը պիտի զգայուի մէկ քանի դպրոցներ ալ անոնց բանալու, եթէ երբեք հիմա պէտք մը չի կար ատանկ բանի մը:

Դուք կրցա՞՞ք մեկնել սակայն թէ, ինչու առանկ կըլլայ, ինչու ամէ՛ն դպրոցէ ելող կ'ուզէ վարժապետ դառնալ հայ տղոց զիտուն, ինչո՛ւ ուրիշ տապալէզի մը սէր չեն տար անոնք, ինչո՛ւ եթէ տան ալ՝ չեն յաջողիր, ինչո՛ւ աննկատ թոյլտուութիւն մը կ'ըլլայ իրենց, եւ վարժարաններու դուռները լայն կը բացուին մանկ ուղողին, ինչո՛ւ մասնագէտ կամ օգնական ուսուցիչի արտօսանքով կը պատկուին անանկ մարդիկ՝ որոնք կը խոստովանին թէ իրենց աւանդած դասը ողջովն առաջ ի՛րենք կը սորվին, ինչու, վերջապէս, հակնալով անոնց կործանարար վնասակարութիւնը, ջանք չըլլալով թափթփուկ վարժապետներու բազմութիւնը չչառցնել մեր դպրատուններուն մէջ, աղո՛ց օգուտին եւ սիրոյն համար, — եթէ հասկցող կան այս բաները:

* * *

Ամէն տարի որ, այս ժամանակներ, Ուսուցիչներու Քննիչ Թանձնաժողովը կազմուի, անոր հետ կը ծագի նաեւ արտունջ մը՝ որ չեմ գիտեր թէ ձեր ամէնուր ահանջին ալ կը հանի:

Բաւական բանաւոր է այդ արտունջը, եւ անիկա մէջտեղ դնելով, նպատակ չունիմ

Մասնախումբը կազմող անդամներուն արժանիքը կամ ո եւ է մէկ յատկութիւնը կասկածի տակ ձգել:

Բայց հակառակ ատոր, արտունջը երբեք չգալիր բանաւոր ըլլալէ, եւ անոր նկատառութիւնը՝ օգտակար:

Յանձնաժողովները, ամէն տարի, ընդհանրապէս, կը կազմուին այն տեսակ անդամներէ որոնք ամէնքն ալ, գրեթէ, ուսուցչական պաշտօն մը ունին աս կամ ան վարժարանին մէջ: Ասիկա ճիշդ գործ չէ:

Ու տեսէք թէ ինչո՛ւ համար:

Այդ Թանձնաժողովը կազմող անդամներէն բոլոր այն ուսուցիչները, որոնք աշակերտներ ունին ո եւ է վարժարանի մը մէջ, յայտնի ջանք մը պիտի ընեն, անխոստափելի կերպով, քննութեան մէջ յաջողցնելու իրենց աշակերտները, եթէ անոնք ընտրելի ներկայանան, այն տեսակ միջոցներով, որոնք երբեք չեն կրնար օրինաւորութեան սահմանին մէջ սղմիլ, եւ որոնց միտքը շատ մեծ է:

Թէ՛ իրենց եւ թէ՛ դպրոցին պատիւին համար, այդ քննիչ-ուսուցիչներէն ամէնքն ալ, պիտի ջանան այն տեսակ հարցումներ ընել, քննութեան մէջ, զորս իրենց աշակերտները արդէն զիտցած ըլլան, մնասո՛վը անշուշտ ուրիշ վարժարանի մը ուսանողներուն յաջողութեան, որոնք կրնան չգիտցած ըլլալ այդ հարցումները, եւ անյաջող ելլել քննութենէն:

Նոյն իսկ, քիչ մը իրաւացի՝ չարամիտութիւնով, կարելի է ըսել թէ, ինչէ՛ն գիտնամ որ, այդ ուսուցիչներէն մէկը, իր տղաքը յաջողցնելու համար, — եւ գիտնալով թէ այն ինչ մասնագիտութեան հարցաքննիչը ինք պիտի ըլլայ, — զանոնք կանչելով չպիտի ըսէ, ամէնէն անմեղունակ ու սովորական բանի մը պէս:

— Տղաքս, աղէկ պատրաստուեցէ՛ք, . . . ի քննութեան այս ինչ բանը պիտի հարցնեմ . . .

Կը գուշակէ՞ք հետեւանքը:

Յետոյ, ուշադրութեան առնուելիք ոչ նուազ կարեւոր կէտ մըն ալ, պաշտօնէ չեղող անձներու ընտրութիւնն է, Թանձնաժողովին մէջ: Անոնք կրնան շատ գիտնական, ուսումնական ըլլալ, եւ ո եւ է մասնագիտութեան մը մէջ անմրցելի կերպով գորաւոր,


բայց ատիկա չբաւեր : Անոնք օր մը օրանց հետաքրքրուած չըլլալով մեր վարժարաններուն մէջ տղոց աւանդուած դասերով , եւ ճշգրիտ գաղափար մը չունենալով անոնց մտաւոր կարողութեանը վրայ , — ամենաւաւերան ու ամենաներելի իրաւունքով , — կրնան , կամ չգիտութիւնով կամ իրենց հմտութիւնը ցոյց տալու համար , աղոց ընել հարցումներ , որոնք անոնց կատարեալ անյաջողութեանը պատճառ ըլլան :

Այսպէս , այս երկու անպատեհութիւնները , առանց այլ եւ այլի եւ անհրաժեշտօրէն կարեւոր կը դարձնեն ուսուցչական ընտրութիւններու քննիչ Յանձնաժողովին անդամներուն բացարձակապէս չեզոք անձեր ըլլալը , դուրսէն , բոլորովին չեզոք անձեր՝ որոնց սակայն պէտք է ցոյց տրուի վարժարաններու մէջ աւանդուած ուսումներու չափը , եւ քննութեան առարկան , տեղի չտալու համար վերը յիշուած անպատեհութեան :

Քննութիւնները խիստ , անաչառ , վկայական բաշխելու մէջ քանքարաթաքոյցէ՝ մը աւելի ժլատ , — որպէսզի դիւրին մուտքէ մը հրապուրուելով , հանդիպողը իր բազմը վարժապետութեան մէջ չփնտռէ , եւ թափթըփով վարժապետներով չլեցունին , չորդին վարժարանները , որոնք կ'օգտէ՝ որչափ լեցած են :

ՍԿԷԼԼՍ.

ՕՍՄ. ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ



Մարտի գրական փունջին ծաղիկ մը աւելցնելու համար՝ օսմաննան Ժամանակակից գրականութենէն ալ նմոյշներ ներկայացնել կը փափագիմ : Այս նոր գրականութիւնը , — «Էսէյիսթը ճէսիսէ» ինչպէս անուանած են զայն թուրքերէնի մէջ — հինէն կը տարբերի իր «գրեւակերպով» : Գիտնալով թէ գաղափարը բացատրուելու եղանակը գեղեցկագիտական հսկայ դեր մը կը խաղայ՝ արդի բանաստեղծները — որոնք փայլուն տաղանդի տէր են — ջանացին նախ եւ առաջ լեզուն կատարելագործել . ոճի արուեստագէտներ

եղան , եւ նուազել չ'սկսած՝ իր գործին լարը երաժիշտի մը նման շտկեցին , ձեւեցին , պարզեցին Օսմաներէնը :

Այսպէս , Խալիա Զիեա , յետոյ Հիւսէյն Զահիա եւ Մէհմէտ Բառֆ պէյերը՝ երեք ալ քաջ տեղեակ ֆրանսերէնի՝ զուտ միանգամայն ճոխացած արձակ մը գործածեցին , առաջինը իր Աշգըր մեմնու եւ Պիր եւզըն քարիիսի , երկրորդը Հաեսթըր մուխայիկ երրորդը Էյյուշ անուն վէպերուն մէջ :

Թէվֆիկ Ֆիքրէթ պէյ — Բեպապը Շիքրէին հեղինակը — եւ Շէհապէտտին պէյ երկուքն ալ հաւաստապէս կարող քերթողներն են որոնք ուսանաւորներու մէջ նշմարուած չափի ու յանգի յոգնեցուցիչ միօրինակութիւնը ապագանեցին եւ ուղեցին որ տաղանդաւորներդաշնակութիւնը համաքաջ ըլլայ բանաստեղծութեան հողին հետ :

Աւասիկ առ այժմ երկու գողարիկ նմոյշներ արձակ բանաստեղծութեան .

Ի Մ Ս Ի Ր Տ Ս (*)

Սիրտս քնարի մը պէս է , որուն անհամար լարերուն վրայ կը հեծէ հոգիս , — մտքած , մտքուած , անտէր , վշտաբեկ քաջ մը , միայնակ ըլլալուն վրայ կ'ողբայ , որ իմ ըսելով սուգ կը բռնէ : Էն թիւթիս չունելով իսկ կը թրթռայ տրամայոյց՝ աճիւղի զգաստն ու հրահրուած է ան , եւ իր թրթռումները աճիւղի անդգալի՝ որ ոչ ոք կը լսէ կարծես գաղանի հառաչներ , խոնջած ու գինով լարերու վրայ լալաղին հառաչներ :

Կը թուի ինծի թէ այդ անանձին կոկորդաւերը — երգելու ծարաւի՝ սակայն լըտած այն խեղճ քնարին անմասն իղձերը — բացառուելով այս տենչերով ախ կը քաշեն ներդաշնակութիւններու , կը ցանկան քայքայ նուազներու որ ա՛յլ չեն հնչեր այդ լարերուն վրայ — խօլ , դողդաջոյ նուազներ , կնոջ ջղախմբ մատերուն տակ Ժպտող , լացոյ , մարդ մեռցնող նուազներ :

Կուզեմ որ սիրալուռ , բերեղեայ , լուսեղէն այդ մատերուն մէջ խաղալիկ մը գտնուի :

(*) Մէհմէտ Բառֆ պէյի ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵԳԻՆԻՔԻՆԵՐԻՆԵՐԻ անուն գիրքէն քաղուած :

նայ սիրտս՝ գերի եղած , կախարդուած . կու-
զեմ որ կնոջ ձեռքերու տակ զրկուելէ յոգնի
սիրտս եւ չարչրկանքներու մատնուած՝ եր-
կանիկ ըլլայ յանդիմանուելով , թո՛ղ լայ ,
ցաւի կողկողադին , եւ եթէ զիմամ որ վեր-
ջին հեկեկանքով մը անխուսափելիօրէն պիտի
խորտակուի , կտոր կտոր պիտի ըլլայ ան ,
կեղեմ որ դարձեալ հնչէ ջգոտ մատներու ,
կնոջ մատերու տակ ժպտող , լացող , մարող ,
մեղցող նուագներով :

Թերեւս հոգիս այդ թելերուն վրայ իր
վիշտերը կոծելով , շուրթ շուրթի գայ անոր
հոգով . թերեւս ան անոն սիրոյ ձայնով՝
թողայ սրտս , սիրոյ ձայնով զոր ո՛չ մէկ մահ-
կանացու յաջողած է կրգել մինչեւ հիմա . . .

ՔԻՐԷԶ — ՊՈՒՐՆՈՒ

Մովեղերքի վրայ , առանց մարդու մը
հանդիպելու , միայնութենէն , մութէն , հու-
վէն տեսակ մը գոհունակութիւն զգալով ,
մինչեւ Քիրէջ Պուրնու քաղցի : Սեւ , սեւ
էր դիչերը , եւ ծովի ու ափունքի խաւար-
ները իրարու խառնուելով ամէն բան կու-
թութիւն մը դարձած էր միակտուր :

Մաշկ երկինքին տակ կատաղութեամբ
փրփրացող հովը , վայրագ ցատումով մը ինք-
զինքը ծեծող ծովը՝ զիչեցուած հետ կը մար-
տնչին իրար յօշտել ուզելով : Մութ կռիւ
մըն է կարծես որ կը խռովէ բոլոր տար-
րերը :

Ան ատեն ունայնութեան , սեւ ունայնու-
թեան մը զգացումը սարսափի զոգով մը կը
պատէ քեզ եւ անէութիւնը զգալի կ'ըլլայ
դրեթէ , Սակայն քանի որ իր զգուանքներով
սիրտս արեւցնող այդ նայուածքը կայ , եւ
կ'արձամարհիմ ոչնչութիւնը , վիշտը . տար-
բերու այս պայքարին մէջ եւ կաթիլ կաթիլ
կը վաշկեմ երջանկութեան քաղցրութիւնը :

Չգոյութիւններ յիշեցնող խաւարներով
մոնջէ , ժպտերը ծեծէ , ո՛վ ծով , եւ կ'երգ-
նում թէ հոգիս մէջ ժպտող այդ նայուածքին
առջին ոչնչութիւն , ցաւ , կը յաղթուի , կը
լռէ . . .

Թարգմ. ՅԱՍՄԻԿ

ԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ

— ❧ —

ՌԵԴԱԿՏՈՐ ԱՆԸ

Արեգակին շողերը այնչա՛փ զօրաւոր են
որ , երբ իրենց է՛ն լեցուն ժամանակը երկրիս
վրայ ճառագայթեն՝ անմիջապէս ահագին զօ-
րութիւն մը դուրս կուտան . այսինքն՝ 1
եարտա արամագիծ ունեցող գեանի մը վրայ՝
մէկ վայրկեանի մէջ՝ 3 ձիու զօրութիւն ու-
նեցող ջերմութիւն կը սփռեն : Արդէն գի-
տենք որ՝ եթէ Նիակարայի ջրվէժին արտա-
դրած ուժը կիրառուի՝ անթիւ անհամար բա-
րիքներով պիտի ոգողուին հին եւ նոր աշ-
խարհները : Սակայն Նիակարայի արտադրածը՝
արեգակին արտադրած զօրութեան հետ բազ-
մապէս չափ չեն ընդհանրանում : Եւ տեսէք ինչպէ՛ս .
Կէս օր ժամանակ՝ երբ արեւը է՛ն շատ կը
տաքցնէ մեզ՝ Նիակարայի արտադրած զօրու-
թեան չափ ջերմութիւն՝ կը թափէ , միմիայն
. . . չորս արտավար գեանի մը վրայ :

Հսկելու ամէնէն կարեւոր հարցը սա է
թէ , ինչպէ՛ս կարելի է այս ահագին զօրու-
թիւնը կիրարկանել : Գիտութիւնը միշտ
դանդաղօրէն առաջ գացած եւ անկէ վերջ
յաջողած է , ինչ որ կրնայ ապահով աւելու-
ւտանայ մը ըլլալ խուզարկուին : Ստուգուած
է թէ նաեւ մը , առանց ո՛ր եւ է շարժիչ զօ-
րութիւն մը գործածելու՝ պիտի կրնայ ճամ-
բորդել , եթէ տախտակաման վրայ ինող
ճառագայթները մէկ հաւաքուելով՝ միացեալ
զօրութիւն մը առաջ բերէին : Աշխարհ՝ մէկ
տարուան մէջ՝ 8 միլիոն թօնօ հանքածուխ կը
սպառէ . մինչ անդին՝ Սահարայի անապատը ,
20 քառակուսի միլոնէն պակաս տարածու-
թեան մը մէջ՝ միեւնոյն քանակութեամբ
տաքութիւն կ'արտադրէ : Զօն Էմբերն՝ Ամե-
րիկացի հնարիչը՝ առաջին անգամ ըլլալով իր
ուշադրութիւնը այս կէտին վրայ դարձուց ,
եւ 1870ին արտադրեց իր արեգակնային առա-
ջին մեքենան : Այդ թուականէն մինչեւ 14
տարի՝ ջանաց գիւտը կատարելագործել , եւ
է՛ն վերջը սա արդիւնքը ձեռք բերաւ որ՝

կարող կ'ըլլար 100 քառակուսի ոտք տարածութիւն ունեցող գետնի մը վրայէն՝ 1 ձիու զօրութեամբ ուժ արտադրել։ Այսպէս, էրիքսըն՝ արեգակի զօրութեան $\frac{1}{30}$ երրորդ մասը միայն զգալի կ'ընէր։ Իր յատակազիծը կը բազկանար՝ ճառագայթներու ջերմութիւնը հայելինեւու միջոցով կեդրոնացնելու մէջ։

Գրեթէ այդ ժամանակները, Մուշօ անուէն ֆրանսացին ալ միեւնոյն նիւթին չաւրջը կ'աշխատէր, հետեւաբար միեւնոյն արդիւնքները ձեռք բերաւ։ Միայն սա տարբերութեամբ որ, Մուշօ իր հետազօտութիւնները գործնականի վերածեց, իր հնարած մեքենան օգտակարապէս կը գործածուի Ալթերիոյ մէջ՝ ճահճային գետիները չորցնելու համար։

Հարաւային Բասիտէնայի մէջ (Քալիֆորնիա) վերոյիշեալ նպատակին ծառայելու համար էրիքսընի զրութեամբ մեքենայ մը չինուելու վրայ է, որուն էն կարեւոր մասը՝ կեդրոնացուցիչ-անդրադարձուցիչ հայելին է. այս հայելին ձեւը՝ ամէն բանէ աւելի՝ հովանոցի մը ներսի կողմին կը նմանի։ Ներքին մասը՝ 1,788 ապակիի պղտիկ կտորներէ կը բաղկանայ։ Այս կտորները այնպէս մը յարմարեցուած են իրարու որ, ճառագայթները ուղղակի մէկ կէտի մը վրայ կ'անդրադառնան։ Հայելին շրջանակաձեւ մոկերեսին երկայնութիւնը՝ էն լայն կողմէն հաշուելով՝ $33\frac{1}{2}$ ոտք է, իսկ եթէ էն նեղ կողմէն հաշուելով՝ 15 ոտք։ Հայելին պողպատ կազմածի մը վրայ ամրապնդուած է. այս ձեւակերպումը շատ նպաստաւոր է ձեւնարկին, վասնզի մասնաւոր զրութեամբ մը՝ հայելին առանցքը արեգակին դիմաց դրուելով, հայելին՝ արեգակն ճառագայթներուն կեդրոնացումին առարկայ կ'ըլլայ։ հաղորդիչ մը ցոյց կուտայ թէ՛ արդեօք անդրադարձուցիչ-կեդրոնը որոշեալ կեդրոնին վրայ կը տեղացնէ՞ սպասուած ջերմութիւնը։ Երբ անգամ մը մեքենան պէտք եղած տեղը կեդրոնացուցուի՝ ա'լ անկէ վերջ ինք իր ուղղութիւնը կը գտնէ՝ ժամացոյցով մը կանոնաւորուելով։ Երբ աաքութիւնը կը կեդրոնացուցուի հրալից կաթսայի մը վրայ, նախ առաւօտեան մէզի նման շոգի մը բարձրանալ կը սկսի. սակայն ժամ մը վերջը, հայելին իր ջերմադին զօրութիւնը ցոյց կու

տայ, պոռթկացող շոգի մը գուռ կուզայ կաթնայէն. եւ ի հարկին՝ տարբեր մեքենաներ թեամբ մը՝ գործիքին ընկերացող լազարեայ մասին կը հաղորդուի, որով արեգակը կարող կ'ըլլայ անորոշապէս ջուր քաշել ովկիանոսէն 1 րոպէի մէջ 1400 կալոն ջուրի համեմատութեամբ։ Արեւը մարը մտած ժամանակ՝ հայելին այլեւս չկրնար գործել կաթսային վրայ եւ ջրհանը կը դադրի չարժելէ։ Շատ մաքրիք երբ մեքենան իր գործառնումին մէջ տեսնեն՝ կ'ուզեն դիտնալ թէ ի՞նչ է պատճառը որ կաթսային մէջի ջուրը չորհնալ կըսկըսի։ Եւ կատարելապէս թերհաւատ կը գտնուին ջերմութեան մը գոյութեան մասին, իբր ապացոյց, պղինձի կտորի մը կամ վաղի մը վրայ կեդրոնացուցուցեալ ջերմութիւնը, արդիւնքը անկասկածելի էր. երկուքն ալ այրեցան։

Առ այժմ Բասիտէնայի մէջ կառուցուած մեքենան բուսական գոհացուցիչ կերակուած թէպէտ ո'չ կատարեալ, — բան մը զոր ապագան միայն պիտի կատարէ։

Վ. Ա. Գ.

ՍԽՐԱՏՈՍՍՈՂ

Անբիծ ձեռքդ իր գրեթով — վարդ ճիւղիկն՝ Սահաճ ասեմ անուոնչ բուլբիմ վրայնի, կամֆի բոյլ մը դրօժում եր յանկարճ հոս, Լափեցի զայն, ժպիսներով արցունքոս։

Ո՛հ, տղերեկդ նառագայքներ բխեցան, Ըրին հոգւոյս տարամութիւնը ցիւցան. եւ կոյս սրտիդ վարդ բաղձանքները, հոգիս, եղան որո՞ւ իսեպները կեանքիս։

Եւ նամակդ, ինձի համար հոգեթով, Աղօթագիրք մըն է զոր միշտ եռանդով Պիտի լսվեմ, պիտի կարդամ ամեն օր։

Աղօթագիրք — կեանքի աղբիւր անպառ Որ ինձ յափրանք չսար երբեք, իսպառ Ու կը կարդամ ակնածանքով մը միշտ խոր։

Վ.

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՏՌԱՄՆԵՐ

ՎՃԱՐՕՐԸ

Վ. Է. Կ. ԲՕԼ՝ ՊՈՒՐԺ. Է. Ի

Թիւ 6

Գ.

Ամէն մեծ բժիշկի, ինչպէս թատերական
ամէն մեծ հեղինակի, եւ հաւանօրէն ամէն
մեծ դերասանի մէջ կարգ մը կարողութիւն-
ներ կան՝ շատ աւելի մօտիկ գործի մարդու
տիպարին, քան մտքի մարդու տիպարին։
Այս բարդ արուեստները որոնք այնքան կեն-
դանակաճութիւն կը պահանջեն, կ'ենթադրեն
նաեւ բացառիկ կարողութիւն մը անձնական
հաստատման թեման, անմիջական որոշողու-
թեան, իսկական կանխամտութեան։ Անոնք
կը հանդուրժեն իրականութեան ուղղակի
տիպարումին, եթէ կ'արելի է այսպէս ըսել։
Սրբեմն հարկաւոր է բնախօսական այն կո-
րովը որ թող կուտայ սանձահարել ջիղերը։
Ես յաճախ առիթ ունեցած եմ այս դիտողու-
թիւնը ասուելու՝ մտաւորական այս երեք տի-
պարներէն գերադասեց օրինակներու հետ յա-
բարեթիւրեաներու մէջ։ Բժշկական կար-
գապահութեան այս գրեթէ զինուորական ա-
ռաքինութիւնը երբեք այնքան լաւ չէր զար-
կած աչքիս որքան՝ իր ծնողացմէ կողոպ-
տուած այդ մարդուն հետ Էօթէն Քոռալիէնի
տեսակցութեան յաջորդող վայրկեաններուն
մէջ։ Անտարակոյս Էօթէն վիշտէ ջախջախ-
ուած էր՝ լսած յայտնութենէն յետոյ։ Բնաւ
չէր տարակուսիր անոր ճշմարտութեանը վը-
րայ։ Եթե իմ աշուճներէն հասկցայ իս-
կոյն։ Սակայն շարժում մը չըրաւ, բառ մը
չարտասանեց որ՝ նոյն իսկ ինծի հանդէպ՝
մասնէր իր ներքին զարհուրելի փոթորիկը։
Պարզապէս ըսաւ ինծի. «Կրնա՞ս Ամիս փո-
ղոցը ձգել զիս։ Յետոյ կ'առնով քու առնդ
կերթամ...»։ Եւ, իմ հաստատական պա-
տախտանիս վրայ, ծնողացը հասցէն, տուաւ
կառապանին, ձայնով մը որ չէր գողար։
Մինչ կ'առքը մեզ կը տանէր Վալ-տը-Կոասի

այդ հին թաղին մէջէն, Էօթէն կրնար՝ զըռ-
նակին ապակիէն տեսնել տողանցումը մեզ
այնքան ծանօթ փողոցի անկիւններու, կըր-
պակի երեսներու, պատի խորշերու, հարիւ-
րաւոր ընտանի տեսարաններու որոնք իր՝
ինչպէս իմ առջեւ կը կանգնեցնէին իր ու-
սումնասեմն իրիտասարդութեան սահմաժա-
մերուն հեռանկարները։ Որքա՞ն անգամներ
միասին թափառած էինք այդ մայրերուն
վրայ, երբ ինք գոսընթացքի մը կերթար ու
եւ իրեն կ'ընկերանայի, կամ թէ եւ զինքը
կը քաշէի դէպի Լիւքսամպուռ ու ինք ինծի
կը հետեւէր, երկարելու համար մեր գաղա-
փարներու անթիւ խօսակցութեանց մէկը։
Բոլոր այդ ժամերը, այո՛, բոլորն ալ, եռան-
դալից աշխատութիւններու ու ազնիւ հա-
ճոյքներու այդ ժամերը կարելի՞ քան է որ
արդիւնքը եղած ըլլային զգուելի ոճի մը, եւ
հայրն ու մայրը այդ դժբախտէն գողցած ըլ-
լային անոր պարապ ժամերը։ Եթէ այս ակ-
նեւեռութիւնը մեղամաղձութեան տակ կը
ճնշէր զիս որ պարզ վկայ մըն էի, ի՞նչ յու-
սահատութեամբ այսահարուած ըլլալու էր
ինք, այդ ահռելի առամին կենդանի գերա-
կատարը, — տաւ մը որուն դիւցազնն էր
եւ զոր անգիտացած էր։ Սակայն կը պահէր
այն բացարձակ ինքնազստումը զոր իր վրայ
տեսած էի հիւանդանոցի անկողիններուն առ-
ջեւ։ Կը թուէր ներկայ գտնուիլ իր իսկ մտա-
ւորական հոգեւարքին՝ այն միեւնոյն հաստա-
տամտութեամբ զոր ունեցած էր խնամելու
համար ուրիշ այնքան հոգեվարքներ՝ նուազ
ցաւագին քան իրը։ Դէմքը կարծես սեղ-
մուած էր կամքէ, աչքերը չոր էին ու բե-
րանը գոց։ Ինչպէս նախորդ ճամբորդութեան
միջոցին, հիմակ ալ բնաւ բառ չփոխանակե-
ցինք։ Ի՞նչ հարկ։ Նախ իմ՝ օտարականին։

վրայ է որ յուզումը յաղթեց այս խիստ ձեռն-
պահութեան , երբ ծնողացը դրան առջև
վար իջաւ , ձեռքը բռնած ատենա չկրցայ
ինքզինքս զսպել ու չհշտով մը զոր անձկաւ-
թիւնը կը խզէր , ըսի իրեն .

— Յիշէ՛ թէ ծնողքդ որքա՛ն սիրած են
քեզ . . .

— Աւելի ազէկ էր որ տաէին զիս , պա-
տասխանեց , այնքան չպիտի սրտմտէի իրենց
դէմ :

Այս սրբապիղծ խօսքերը արտասանուեցան
չհշտով մը ուր կը սարսուար սրտմտութեան
այնպիսի ընդոստում մը՝ անողք ու ցուրտ
միանգամայն , էօթէնի նայուածքը անանկ
բունն արհամարհանքով մը լեցուած էր , իր
հանդարտ երեւոյթին տակ մոլեգնութեան
այնպիսի վիճակի մը հասած կը զգայի զինքը
որ թողուցի որ տուն մանէ եւ անյայտ ըլ-
լայ , առանց իրեն պատասխանելու : Ինչ
հարկ նորէն , կառքին մէջ նեղուեցայ վերս-
տին՝ ինքզինքս ձգելով զիս առջող արդա-
հատանքին , ու միշտ սա միւսնոյն բառերը
կրնայի կրկնել .

— Աստուած իմ , խեղճե՛րը , խեղճե՛րը . . .

Սոսկումի այս աղաղակը արձակեցի միտ-
քս բերելով տեսարանը զոր բարեկամս պիտի
ներկայացնէր՝ դատաւորի մը պէս երեւնալով
այդ ծեր մարդուն ու այդ պառաւ կնոջ առ-
ջև , ուրանալով դանոնք եւ նախատելով ,
զինքը մեղսակիցը ըրած ըլլալուն անամո-
թութեան մը , այդ վստահութեան զեղծումին՝
մեռելի մը հանդէպ : Կը տեսնէի որդւոյն
համիրը այդ տունը զոր այնքան լաւ կը
ճանչնայի , կը տեսնէի ծնողքը , կը լսէի ի-
րենց ձայնը . « Մայրք , սպաննե՛լ կուզես ու-
րեմն , դաւակս » — « Ես չեմ քու կեանքդ
խորտակողը , դուն ինքդ ես . . . » : Յաւի-
տենական Քրիսթմէսնոսրի եւ յաւիտենական
Օւէսդի այս արամախօսութիւնը միաքս կու-
ցար , ու կը վախճայի , Եւքէն , երբոր էօթէն
ինծի պատմեց թէ ինչ յուզումներէ անցած
էր այդ ժամուան միջոցին որ իսկապէս իր
կեանքին վճռական ժամը եղաւ , ուր իր մար-
դու ճակատագիրը որոշուեցաւ , հասկցայ թէ
ո՛րչափ իրաւունք ունեցած էի վախճալով

եղերական տեսարանէ մը , այդ սոսկալի ա-
կածին մէկ սոսկալի վախճանէն :

— Որոշումս արուած էր , ըսաւ ինձի ,
կուզէի հարցափորձել զիրենք , ճշմարտու-
թիւնը իրենցմէ իմանալ , խոստովանցելի զո՞ր
իրենց , անխճել զիրենք ու յետոյ անձնա-
պան ըլլալ . . . :

Սիրտը այս բուն միջոցին զգացումներով
յուզուած էր , երբ խեղճ աղան հասաւ իր ան-
ցաւոր ծնողացը դրան առջև : Ներքին ըն-
դոստումի այդ սուր տագնապին մէջ , ի
անցեալ կեանքը այնպիսի դարչանք մը կը
պատճառէր իրեն որ սովորական երկու հար-
ուածները հնչեցնելը գէշ ազդեց իրեն : Ար-
որոշուած նշանը , որուն ապահով էր թէ պի-
տի պատասխանէին , պահ մը իր աչքին առ-
ջև բերաւ երկար տարիները զոր ապա-
էին հոս , անոնք ու ինք , — անոնք՝ գոյթը
ինք՝ անոնց մեղսակիցը : Բնաւ կասկած չկող
որ , եթէ դուրը բացուէին ետքը իր դէ-
տեսած ըլլար էրկիմարդու դէմք մը , իր գա-
րոյթը անդարմանելի պայթումով մը միայն
պիտի սփռուէր : Բարեբախտաբար , ծերունի
Քոռպիէն տունը չէր , էօթէն բարակ մշկա-
մին ետեւէն ճանչցաւ իր մօրը թիթեւ քա-
ռածքը , եւ երբ սողնակը դարձաւ կզպան-
քին մէջ , զինքն ընդունելու համար գտաւ
պառաւ կնկան աչքերն ու ժպիտը , — այդ
աչքերը որոնց վշտագին տեսքը առաին ան-
գամ հի՛մա կը հասկնար , այդ ժպիտը որ կը
ժպտէր դիմադներու վրայ որոնց այլալուծին
կը հետեւէր օրերէ ի վեր . այժմ դիմէր ասոր
պատճառը : Եւ ահա յանկարծ , այդ հիւանդին
առջև որ իր ծոցին մէջ կրած էր զինքը ու
կաթովը սնուցած , — հիւանդ՝ իրեն համար
դործուած ոճրի մը խղճի խայթէն , — որդին
զգաց իր գայրաղին ըմբոստումին կաթիլը
խփնալը , հալիլը կսկիծաւ խոնդաղաւանքի
մէջ որ իր ամբողջ մարմինը գողգողաց-
նալով իր պառաւ կնիւր որուն ծերացած աչ-
քերն էր փոքր նախասննակին ստուերին մէջ
անմիջապէս չէին տեսած իր դէմքին ասո-
նաւորայութիւնը , սովորական զոռչութիւն-
ներով կը զոցէր դուռը , եւ կը սկսէր ինչ-
պէս միշտ , պատմել խոնարհ պատմութիւնը
ընտանեկան ներքին կեանքին :

—Աստուած՝ իմ, եթէ դիտնայի որ այո առաւ պիտի գայիր, կըսէր պառաւը, ճշմարիտ նախաձեռն մը կը պատրաստէի, լոյսիւղով եփած հաւկիթ զոր այնքան կը սիրես : Թարմ թարմ անսայ Մօնի փողոցին վաճառանոցը, ուր զացի այս առաւ : Հայրդ ալ դուրս ելաւ : Այս առաւ ինքզինքը շատ աղէկ չէր զգար : Գիտարաշնչութենէն կը նեղուի դարձեալ : Քննելու եւ նորէն զինքը . . . Բայց դժուար ինչ ունիս, զաւակս . . .

Արարեալ, խօսելով հանդերձ, մայրը արգիւն ետնէն ճաշատարած մտած էր : Յորդ լոյսին մէջ անոր երեսը նայած էր, եւ այս նայածքը բաւ եղած էր գուշակելու համար թէ իր որդին արտասովոր յուզման մը տակ կը գտնուէր :

—Զաւակս, կրկնեց : Զաւակս, էօթէն . . . Ա՛հ . . .

Չմեղուց : Այս ազդեակը զոր կ'արձակէր իր մօրը սիրտը՝ ամէնէն շանթահարիչ յայտնաբերութեամբը լուսաւորուած, մէկէնիմէկ կանգ առաւ յուշահատութեան պայթումին առջեւ անոր որուն կ'ուղղէր այդ ազդեակը : Քաղկէն ինքզինքը ձգած էր արթնի մը վըրայ, եւ հոն սկսած էր ջլաձիգ հեծկլառքներ արձակել : Ամէն բան գիտնալէն յետոյ նորէն այդպէս գտնուիլը այն առարկաներուն մէջտեղ որոնք իր ամբողջ պղծութեան առարկաներն էին եղած, շատ զփնդակ եկած էր իրեն, ու կը թաւալէր բռնուն զգայնութեան կոհակին տակ որ կը լարձրանար իր մէջ : Գուցէ արցունքի այդ տափնապը փրկեց ինքը անձնասպանութենէ ու խելագարութենէ, խորտակելով զարհուրելի ձգտումը ուր տեսած էր իր էութեան կիծուիլը, եւ մայրը, ընտանեկան այդ փոքր սենեկին մէջ ուր ածուած էին լիւսեցիկն եւ ուսանողին բոլոր յաջողութիւնները, սոսկումով մտիկ կընէր այդ աղմուկը, աղեկոտուր հառաչանքներու, խղիւղ ազդեակներու այդ ուրաւկանը զոր կարծակէ էրիկմարդու մեծ վիշտ մը : Բժիշկը կը ցնցուէր, եւ կարծես կը զաւարտէր այդ տափնապէն որուն պատճառին վրայ չէր կիներ այլեւս չէր կրնար տարակուսել : Օրերէ ի վեր անիկա չափազանց վախճած էր որ զաւակը երեւան հանէ այն ոճիւրը

զոր գործած էին ինք ու ամուսինը, զաւակընուն համար գործած, բայց ոճիւր վերջապէս : Եւ տարաբախտ երիտասարդին վրայ հակած, քաղուհներուն մէջ սեղմելով շայն, կըսէր, ինքն ալ խելայեղ :

—Էօթէնս, ե՛ս եմ, մայրդ է : Երեւս նայէ : Կը տառապի՞ս : Ի՞նչ ունիս : Ինչո՞ւ կուլաս . . . Ա՛հ, խօսէ՛ . . .

Յետոյ վայրենորէն .

—Բայց խօսէ՛ կըսեմ : Ընկիւք ինչ ալ ըլլայ, ըսէ՛ ինծի : Շատ կը չարչարես զիս . . .

Այս վերջին կոչին մէջ մայրական սիրոյ այնպիսի վայրագ կորով մը զրած էր որ անիկի բնեցաւ այն անգիմազրելի թելադրանքը որ մինչեւ հոգինուս խորը կ'ըջնայ՝ խոստովանութիւնը խղիւղ համար անկից : Լացողը վեր առաւ գլուխը, եւ իր խօսքին մէջ զնուղով իր բովանդակ վիշտը՝ բայց նաեւ բովանդակ գործը որով խոռոչուած էր հիմակ ան, ըսաւ :

—Խեղճ մայրս, Տօպուռ-Սէն-ժաք փողոցէն կուլամ . . .

Մայրը պատասխան չտուաւ : Էօթէն, այս խօսքը ըսելէն յետոյ, անոր երեսը նայած էր ակամայ, Տեսաւ որ անիկա ընկրկեցաւ, պառուրտած ձեռքերն ընդ առաջ, եւ իր դէմքը պատեցաւ այնքան զարհուրելի տըժգունութեամբ մը որ էօթէն կարծեց թէ պիտի մեռնէր ան : Բժիշկը արթնեցաւ որդւոյն մէջ, ու ինքն ալ իր կարգին անոր քով վաղեց՝ անոր տալով միեւնոյն անունը զոր պիտի տար քսան տարի առաջ, եթէ անոր այդպէս տըժգունիլը տեսնար :

—Մա՛րիկ . . .

—Թո՛ղ զիս, ըսաւ կինը, միշտ ընկրկելով մինչեւ որ հասաւ սենեկին պատին քով : Հոն, ետին դարձաւ, գլուխը ձեռքերուն մէջ առաւ եւ ծնրադրեց աղօթելու համար երկարօրէն : Երբ աղօթքը վերջացնելէ յետոյ ոտքի ելաւ, իր աչուքներուն մէջ, ճակտին վրայ, բերնին շուրջը յուսահատութեանը մէջ տեսակ մը պայծառութիւն ունէր որ տարօրինակ կերպով կը հակասէր այն ներքին հասնումի արտայայտութեանը հետ, որ տարիներէ ի վեր այնքան վրդոված էր իր որդին :

—Այսպէս աւելի աղէկ է, հեծեց տարօ-

բէն վերացումով մը : Շա՛տ երկար ատենէ ի վեր այս բանը կը խզէր զիս : Աստուած ողորմեցաւ ինծի . . . : «Այո , շարունակեց ա՛լ աւելի վերացած , գիտէի որ փրկութիւն էր երբոր դուն գիտնայիր ամէն բան , եթէ ես կարենայի քեզ խօսիլ , բացատրել , եթէ այս վիշտը ունենայի այս կեանքին մէջ , Դուն դարձեալ ամէն բան պիտի իմանայիր վերջին դատաստանին օրը , երբ նայուէր արտերուն խորը , եւ այն ատեն շատ սարսափելի պիտի ըլլար . . . » : Յետոյ գոցելով աչքերը , եւ սարսուռով մը . «Պատրաստ եմ բաժակը խըմելու , Բարին Աստուած այդ ուժը կուտայ ինծի . . . Էօթէն , ըսէ՛ր լուրս գիտցածդ , բոլորը , ու ես պիտի ըսեմ թէ ո՛րը ճիշդ է , ո՛րը սխալ . . . Ինծի հնազանդելու ես , զաւակս , քանի որ քսւ մայրդ եմ , որ չափազանց միայն սիրած է քեզ . . . Հարցափորձէ զիս , կ'արտօնեմ քեզ , սրպէսդի մեր մէջ այլեւս ճշմարտութիւնը միայն գտնուի» :

— Պիտի փորձեմ , ըսաւ Էօթէն լռութենէ մը հտքը : Յանկարծ այդքան անյողզողդ ընթացքին առջեւ այդ կնոջ որուն այնքան խնո՞ւմով-յողջ , այնքան վարանոտ ըլլալը գիտէր , յարգանքի զգացում մը կը զգար այնու մանաւանդ՝ տարօրինակ , վասնզի ինք եկած էր բացատրութիւն մը առնելու որ , ինքն ըստ ինքեան , նախապէս լինէր : Բայց կարգ մը փորձեր համակերպութեամբ ընդունելուն մէջ թաքուն մեծութիւն մը կայ : Եւ այս յուզումով է որ — ամէնէն աղնիւր զոր կարենար ունենալ այդ բոպէին , միակը որ փրկէր զինքը բարոյական ծնողասպանութենէ այդ հարցափորձին մէջ — անիկա կը շարունակէր . «Իրա՞ւ է որ Յօպուռ-Սէն-Ժաք փողոցը բընակող թշուառը , այդ Բիէն Ռոպէսը հօրս մէկ պաշտպանին անհարադատ դաւակն է» :

— Իրաւ է , պատասխանեց մայրը , Պ. Բի. էն Ռոպէն Հօարիքի գաւալը : Ատոր համար է որ աղան այս երկու մականուններովը արձանագրուեցաւ : Այդ Բիէն Հօարիքը Քուպիէնի կաթնիկըսըն էր : Քու մեծ մայրդ անոր սանտուն խղած է Բերոնի մէջ , Անիկա դրած էր մայրդ իր գործին :

— Ուրեմն , յարեց որդին , որուն բառերը կը պակսէին այլանդակ հարցը բանաձեւելու համար , մնացածն ալ ճիշդ է . . .

— Թէ Պ. Հօարիկ մեր քովը դուժար մը աւանդ ձգած էր այդ աղուն համար : Աս պէ՛րք է . . .

— Եւ թէ դայն ինծի համար գործածեցիք , հարցուց Էօթէն նուազուն , գրկի՞նք ցած ձայնով , իբր թէ վախնար որ իր իսկ խօսքը լսած պահուն նորէն իր ըմբատումի մղն , գնութեամբը համակուէր ընդդէմ այն ամօթին սրով ծածկուած կը զգար ինքզինքը : Ու դարձեալ նուազուն , շատ ցած ձայնով մըն է որ մայրը պատասխանեց .

— Իրաւ է : Յետոյ ձեռքերը իրարու մէջ սեղմելով ու պազատագրին . «Մաիկ ըրէ , Էթէն . . . Մաիկ ըրէ . . . Մենք շատ յանցարեղած ենք , բայց մեղի հասկնալու համար , ամէն բան զիանալ հարկ էր , եւ նախ թէ Պ. Հօարիքի որդին չափազանց հոգ պատճառէր իրեն : Խելացի էր , բայց ա՛յնքան անպիտան՝ քօչէժէն իսկ : Ատոր համար է որ Պ. Հօարիք ըսած էր Քորպիէնի . «Կուղեմ որ միշտ չեւ երեսուն տարեկանը՝ ուսմանը անհրաժեշտ գումարը միայն ունենայ» : Ու այդ գումարը որոշած էր տարին հազար երկու հարիւր Ֆրանք , Ամրողը դրամագլուխը երեսունըվեց հազար Ֆրանք էր : Մենք պէտք չէ որ ինքզինքնիս աղուն ճանչցունէինք , վասնզի Պ. Հօարիք ամուսնացած էր : Բիէն Ռոպէն մայրը մօտիկ աղջականն էր իր կնոջ , հասնելու մը : Պ. Հօարիք , որ այնքան աղքատ մարդ մըն է , ինչպէս այդ մարդանքին մէջ ինկեր է : Շատ խստօրէն դատեցի զինքը այն ատեն : Հիմա դիտեմ թէ իրաւունք չունի : Ուրիշ գաւակներ ունէր : Կուղէր որ այս գաղտնիքը իր հետ մեռնի : Այս բաները կը պատմեմ քեզ որպէսզի հասկնաս թէ ինչպէս փորձուեցանք . . . Հայրդ հեռուանց պիտի հանէր այդ մանչուն վրայ : Առջի տարին տեղիք թոշակը , ինչպէս պարտ էինք առաջ , եւ իմացանք թէ անիկա Քառթիէ-Լաթէն ապրած էր աղքիկներու հետ , սրճարանէ սրճարան վաղելով , առանց սեւէ գասընթացքի հետեւելու կամ սեւէ գործ մը գործելու : Երկրորդ տարին նորէն ստանք թոշակը , նոյնը ըրաւ եւ աւելի գէշը , հայրդ անդեկութիւններ առաւ : Եւ իմացանք որ խոշոր պարտքեր ըրած էր : Երրորդ տարին . . . » : Մայրը կեցաւ պահ մը :

ու չհրմեռանդութեամբը անոր որ կը սպառէ իր զոհողութիւնը . . . «Յորորդ տարին այն տարին էր ուր զուն զինուորական ծառայութիւնդ պիտի ընէիր, հազար հինգ հարիւր ֆրանք հարկ էր վճարել, որպէսզի մէկ տարի միայն զինուոր մնայիր: Չունէինք այդ գումարը: Մեր պղտիկ ճղճիմ խնայողութիւնը, սուերով ժողովուած եօթը հազար ֆրանք, կորսուած էր՝ վաճառուոր տեղ մը տոկոսի գրուելով: Այնքան աշխատող էիր, այնքան արժանիք ունեցած էիր ըլլալու ինչ որ հիմա եղած ես . . . Ձեռու ընիր՝ էր: Չկրցանք դէմ դնել այն դադարարին թէ ուսմունքն իր կրնալին ընդհատուիլ, մանաւանդ որ խնդիրը միանակ զինուորական ծառայութիւնը ընելուն կամ չընելուն վրայ չէր, հապա սամբոջ սպագայիդ: Ա՛յ, եթէ միւսը քեզի պէս եղած ըլլար, ձեռք կարենայինք մտածել թէ այդ ստակը կորսուած չպիտի ըլլար անոր համար, թէ զայն պիտի գործածէր մարդ ըլլալու համար, քան թէ այդ փորձութիւնը չպիտի ունենայինք . . . Գիտեմ, այդ իրաւունքը չունէինք: Այդ ստակը իրն էր, ոչ թէ մերը . . . Բայց քանքան արժանի էիր անոր, էօժէն, եւ ինքը քանքան քիչ արժանի: Եւ տկարացանք . . .

— Եւ չմտածեցիք, յարեց էօժէն, թէ ձիդ իր նկարագրին այդ տկարութեանը պատճառով միւսը ինչ՝ աւելի պէտք ունէր այդ գրամին: Չմտածեցիք թէ այդ պղտիկ հաստութիւնը իր ձեռքէն տանելով զինքը աւելի զինաթափ կը ձգէիք կեանքի առջեւ, թէ կորովէ զուրկ ըլլալով՝ անպամ մը որ կարող մնար հետզհետէ աւելի պիտի իյնար, եւ թէ ես՝ ձեր որդին, պիտի ըլլայի առոր պատասխանատուն . . . :

(Շարունակելի)

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Ս. Պատրիարք Հայրը որ չարաթ իրիկուն Գողգոթանուք առաջնորդուելով կիրակի առաւ պատարագած եւ քարոզ խօսած էր տեղւոյն եկեղեցիին մէջ, որուն սօնախմբութիւնն էր, երեքշաբթի Պատրիարքարան ինչ՝ ընթացիկ գործերով զբաղելու, եւ չու-

րեքշաբթի Թարագիւտ երթալով, նախ բարի գալուստի աջակութիւն տուաւ Պարսից դեսպանին որ Սըմբըր Բէլէս պանդոկը կը գտնուէր: Եւ այդ Անգլիոյ դեսպանատունը երթալով, էտուրք թագաւորին հիւանդութեանը մասին տեղեկութիւն ստացաւ:

Ս. Կարապետի վաճաճը. — Ինչպէս արդէն ծանուցուեցաւ, Կեսարիոյ բարեջան եւ ուսումնասէր առաջնորդը, Տ. Տրդատ եպիսկոպոսեան, ձեռնարկած է Ս. Կարապետի վանքին մէջ գիշերօթիկ վարժարան մը հաստատել, որ գարեկանքի պիտի ծառայէ ներքին գաւառներու համար: Այս հաստատութեան համար հարկ եղած շինութեան ծախքին մէկ մասը կը հոգացուի տեղական միջոցներով եւ մէկ մասին համար դիմում կըլլայ մայրաքաղաքի բարեւէր հարուստներուն, մասնաւորապէս Կեսարացի ազգայիններուն: Այս նշանակով, Ս. Պատրիարք Հայրը օրհնալի կոնդակով մը կոչում ըրած է ունեւոր ազգայիններու բարեպաշտական ու կրթասիրական զգացումներուն՝ օժանդակելու համար սկսուած խոսամիտից ձեռնարկութեան:

Տոք. Խորասանճեան Էմ. խնդրած է հանգստեան կոչուիլ՝ Կայս. Բժշկական վարժարանի խառնախմբութեան եւ գործնական բժշկութեան ուսուցչի պաշտօնէն: Չինուորական վարժարաններու վերաբեռնութիւնը նշանակելով որ Տօքթ. Խորասանճեան էֆ. աւելի քան երեսուն տարիէ ի վեր դասախօսելով մեծամեծ ծառայութիւններ մատուցած է եւ օսմ. երիցագոյն բժիշկներու դասին մէջ կարեւոր դերք մը գրուած, որոնց ինչպէս կըլլայ Եւրոպայի մէջ՝ հանգստեան կոչել ն. վսեմութիւնը, աւագ բրօֆէսօրի պատուակալ տիտղոսը տալով անոր իբրեւ վարձատրութիւն: Սոյն որոշումը հաղորդուեցաւ Սպարապետութեան:

Տ. Յարգելի բժշկագետին ընծայուած այս պատիւը արձանագրելու աթիւ, հաճութեամբ կը ծանուցանենք նաեւ իր աղջկան՝ Օր. Մելինէ Խորասանճեանի նշանախօսութիւնը՝ Սուլաւացի առպետ Միքայէլ Փօն Բրունգուլեանի որդւոյն, ասպետ Աստուածատուր (Պուղտան) Բրունգուլ հայ երիտասարդին հետ, որ կատարուեցաւ նախորդ

չարթուն Բերա , Տօքթ . Խօրատանձեան էֆ . Բնակարանին մէջ , Ի ներկայութեան Տ . Յովն . Ա . Բահանայ Մկրտանի :

Պարսիկալի բարձրագոյն վարժարանին ամառվերջի հանդէսը կատարուեր է յունիս 11ին եւ վկայական ստացեր են չորս չրջանաւարտներ : Ասոնց ճառախօսութիւններէն ետքը , բանախօսեր են վարժարանին Տնօրէնը Տօքթ . Չէմպերս , նախկին չրջանաւարտներուն կողմէ Յակօր էֆ . Գոնապեան , ինչպէս նաեւ Տեարք Հարէրեան եւ Ծրկայեան : Տօքթ . Յովսէփ էֆ . Տէր-Ստեփանեանի հաստատած 5 ոսկիի գրական մրցանակը այս տարի կէս առ կէս շահեր են չրջանաւարտներէն Պ . Պ . Դատապեան եւ Զրինկիրեան :

Բաւեղորձութեան երկու լուրեր հրատարակուեցան շարթուն , օրաթերթներուն մէջ . — Ծանօթ եկեղեցականի մը նախաձեռնութեամբ , կարող ազգային մը յանձն տուեր է Ս . Սահակ Պարթու Հայրապետի դամբարան-մատուռին շինութեան ծախքը իր կողմէ հայթայթել , որով ալլեւս հանգանակութեան ձեռնարկելու հարկ չպիտի մնայ : — Նիւ Եօրքէն , Յովն . էֆ . Թալչանձեան 50 օսմ . ոսկի զրկեր է Ս . Պատրիարք Հօր , Խառնիւղի Գալֆայեան Որբանոցին մատուռին նորոգութեան յաակացուելու համար : Այս ծախքը հագացուելէ ետքը՝ եթէ գումար մը աւելնայ , սեղան մը պիտի արուի որբուհիներուն :

Ակն . — Արմաշի Դպրեւանքի միաբաններէն Տ . Ազան վրդ . Ակնեցի ազգայիններէ 20 ոսկիի գումար մը հանգանակելով ի նպաստ Ակնայ որբանոց-արհեստանոցին , Ս . Պատրիարք Հօր յանձներ է : — Բինկեանի Թաղ . Խօրհուրդը՝ Ակնայ առաջն . տեղապահ Գէորգ վրդ . Ասլանեանի հովուական օգտակար ծառայութիւնները թուելով , գոհունակութիւն յայտնելու եւ խնդրել է Պատրիարքարանէն որ քաջաւերուի այս վարդապետը :

Մանգումի Էֆեմար որ «Հայ Բողոքականներ»ու յատուկ գլուխ մը ունի , իր Բրոնիկի բաժնին մէջ , ուր օրը օրին կը հետեւի մեր Աւետարանական եղբայրներու կրօնային , կրթական ու մարդասիրական գործերուն եւ հաստատութեանց վիճակին , իր չորեքշաբթի թիւով հետեւեալը կը ծանուցանէ . — «Հայ

Բողոքականներու պիտակոն անձնաւորութիւններէն Բրոք . Յ . Գրիգորեան ամէնէն զօրձական մարդը ըլլալ կը թուի : Վերջերս իր ճամբորդութեան ատիւ , Այնթապի շրջակայ քանի մը եկեղեցիներուն հովուապետ արքանապետի վիճակը նկարագրած էր Աւեսաքերի մէջ , Կրօնասէր մը այդ գրուածներէն զգածուելով , երեք տարուան համար գրամադուխ մը խոստացած է , որպէս ջարդիչներ կամ քարոզչուհիներ պատրաստին անհովիւ եկեղեցիներու » :

Ուսուցիչներու օգնութեան Անտիկի Ե . զարարձութեան վերջին նիստին մէջ , որ գումարուեցաւ Ռէթէոս էֆ . Պէրպէրեանի տան նապեատութեամբ , նկատողութեան առնուելէ որ վերջերս յօգուտ նոյն Միտուկի եղած ժառանգոր նուիրատուութիւններու արդիւնքով նախնական դրամադրսին գրեթէ երկու երրորդը գոյացած է արդէն , հետեւաբար խորհրդակցութիւններ կատարուելու են մնացորդ մասն ալ հայթայթելու միջոցներուն վրայ , եւ որոշուել է յայտագրել արդիւնքը Ս . Պատրիարքին , եւ ամբողջացնելէ յետոյ նախնական դրամադրսը , կարելոյ անօրինութիւններն ընել՝ ուսուցիչներու ոմանց կողմէ տեղ ունեցած նպատակ խնդրանքներուն . Այս առթիւ որոշուել է պատրաստ դումարին կէտը տոկոսով շահագործել , եւ միւս կէտին համար արտօնել է իր գանձապետը՝ Սարգիս էֆ . Դընաձեան , Գրէտի Ֆոնսիէ Էթիքսիկարթեթուղթեր գնել , որոնք թէ՛ ասկառ ունին եւ թէ՛ պարգեւաւոր են :

Իզմիրի Աւաշնորդ Տ . Մելքիսեղիկ Արք . բազան որ աղաքինած էր իր յօդացաւն , վերստին կը տառապի եղեր նոյն հիւանդութենէն : Բժիշկները յանձնարարելու են օգտփօխութիւն կատարել , բայց տակաւին չէ որոշուած թէ ո՛ւր պիտի երթայ :

ՄԱՍԻՍԻ նախորդ բիւով նրատարակուած՝ Մ . Ղուրբեանի սիրերգին 11րդ տողին մեջ վրիպակ մը սպրդած էր , եւ պէտք էր ըլլար՝

Ձեռն նմանի մեր կարճ սիրոյն որ առկայ՝

Արսօմատէր Կ . Ս . Իիթիլիձեմն

Տպագրութիւն Ե . ՄԱՏԹԻՆՍԻՆ

Կ . Պոլիս , Ֆինճանձըար եօղուշու , թիւ 27

ՀԵՊԻ. ԳՈՐԾԱԿԱՂ
ՔԷՈՏՈՐ ՌԷՔՔԷՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՀԷՐՃԱՅԻ



ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ
Յաճախորդաց դիրտութեան
համար

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ

Եթէ կ'ուզէք ամէն
տեսակ գոհարեղէններ
ուսեմալ. զիմեցէք
կ. Պոլիս, Ոսկերչաց

Շուկայ մեծ փողոց թիւ 13

Հերմայի Վանառասունը ունի երեսպական
ճաշակով պատրաստուած գոհարեղէններ,
ամենքն ալ առաջնակարգ ըլլալու պայմանաւ:

Հերմայի Վանառասան գիններն անմրցելի են:

Հերմայի Վանառասունը ունի արծաթեղէն
առարկաներ:

Հերմայի Վանառասունը ունի ժամացոյցներ
և արծաթեայ գաւաղաններ (պասքօն):

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հարիւրին բաւ կանխիկ, մնացեալին հա-
մար շարժական հարիւրին հինգ վճարում:
Կանխիկ գնողին համար 100ին 5 զեղչ:

Գործածուած գոհարեղէններ՝ եթէ վնաս-
ուած չեն՝ 100ին 10 զեղչով ետ կ'առնուին:

30—2

“AU TALON D'OR,”

Օ ԹԱԼՈՆ Տ'ՕՐ

ԲԱՐԻՋԵԱՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ԴՈՐԾԱՐԱՆ

ԳԱՐԼՕ ԱՆՆԱՄԵԱՆ

ՀԱՅ ԿՕՇԿԱԿԱՐ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Նաեւ կաղերու համար պատրաստուած
Կարաս, Վոյվոսա փողոց, թիւ 103

Ճաշակաւոր ու վերջին նորածեղութեան
համաձայն կ'օշկնէրու յանձնարարութեան հա-
մար, — մանաւանդ չափու վրայ չ'իմեղիք, —
կ'արժէ անգամ մը այցելել սոյն վանառա-
սունը:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՍ ՓՈՂՈՑ, ԹԻ 200

Կալաթա-Սերայի Լիսէին դէմ

Դե. Ե. Ե. օրերը առաւօտեան կանու-
խեն մինչեւ իրիկուան ժ. 11¹/₂

Բ. Դ. Բ. օրերը 6 կէն մինչեւ 11¹/₂

Կիրակի օրերը ժամադրութեամբ

Ծանօթ պանդոկապետ Պ. Ենքասիմոս Բուրուքլիսի Գատըգիւլի մէջ վարած յերկու մեծ օթիկները

MODA PALACE HÔTEL (Մօտալ)

ԵՒ

HÔTEL BELLE-VUE (Ֆանարաբի)

Գարնանամուտի մօտաւորութեան առթիւ նոր ու լաւագոյն կազմակերպութիւններ
ստացած են, յաճախորդները ուրիշ տարիներէ աւելի գոհ ընելու համար ամէն կերպով:
Այս երկու պանդոկներն ալ բոլորովին ընտանեկան հանգամանք մը ունին, հանգստաւայտա-
թեան, մաքրութեան եւ լաւ սպասարկութեան բոլոր պայմանները միացնելով:

ՄՕՏՍ.—ԲԱԼԱՍ օթիկը բաց է ամբողջ տարին:

Պէլ-Վիի օթիկը բաց է Ապրիլէն մինչ Նոյեմբերի վերջը: «Պէլ-Վի» օթիկը ունի
ընդարձակ պարտէզ, ուր նուագածութիւն ալ կը կատարուի ամէն օր, եւ դարեջրատուն:

Ամէն անոնք, ընտանիքները մասնաւորապէս, որոնք կը փափաքին գարնան եւ
ամառուան եղանակը անցընել այդ ծովափայտաց ու օդատուն վայրերուն, — Մօտալի կամ
Ֆանարաբիի, — օթիկներուն մէջ, պէտք է փութան հիմակուց զիմեղ Պ. Ենքասիմոս
Բուրուքլիսի: